



**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ В. БРЮСОВА
BRUSOV STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ
Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ВЕСТНИК ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА ИМЕНИ
В. БРЮСОВА
BULLETIN OF BRUSOV STATE UNIVERSITY**

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ЛИНГВИСТИКА И ФИЛОЛОГИЯ

LINGUISTICS AND PHILOLOGY

1(66)

**Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
«ԼԻՆԳՎԱ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ**

ԵՐԵՎԱՆ - 2023

**ԳՈՒՆԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԽՈՐՀՐԴԱՆՇԱԿԱՆ ԴԵՐԸ
ՀԱՅ ԵՎ ԱՐԱՔ ԼԵԶՎԱՄՇԱԿՈՒՅԹՆԵՐՈՒՄ**

ՔՐԻՍՏԻՆԵ ՌԱՖԱՅԵԼՈՎԱ

Համառոտագիր

Գունանունների խորհրդանշային իմաստները կարևոր դեր են խաղում աշխարհի լեզվական պատկերի ազգային առանձնահատկությունները բնորոշելու համար: Նույն գունանվան խորհրդանշային իմաստը կարող է էապես տարբերվել ոչ միայն տարբեր ժողովուրդների, այլև մեկ ազգային մշակույթի շրջանակներում:

Հոդվածում քննարկվում են բնության մեջ հայտնաբերված մաքուր երանգների ծագումը, գործածության հաճախականությունը, ինչպես նաև կատարվում է արաբերենում և հայերենում գունանուններից կազմված դարձվածային միավորների զուգադրական ուսումնասիրություն:

Հիմնաբառեր՝ մշակույթ, լեզու, գունանուն, դարձվածք, ծագում, նշանակություն, խորհրդանիշ:

Ներածություն

Աշխարհի լեզվական պատկերի ազգային առանձնահատկությունները բնորոշող ամենահայտնի ցուցիչներից են գունանունները, որոնք իրենց վառ արտահայտությունն են գտել արաբերենում և հայերենում գոյություն ունեցող կայուն, «քարացած» լեզվական արտահայտությունների՝ դարձվածային միավորների մեջ:

Գույնի ընկալման ուսումնասիրությունը մարդկանց հետաքրքրել է հնագույն ժամանակներից: Սկսած Է. Սեպիրի դասական աշխատություններից մինչ այսօր Էթնո և զուգադրական լեզվաբանության համար գունային բառապաշարի ուսումնասիրությունը իր արդիականությունը չի կորցրել: Գույների իմաստային դաշտն առկա է աշխարհի բոլոր լեզուներում, սակայն դրանք չեն համընկնում ո՛չ քանակապես, ո՛չ տարբերակման աստիճանով, ո՛չ էլ հարակից հասկացությունների սահմանազատմամբ (Корнилов, 2003, с. 169):

Սույն աշխատանքի նպատակն է ուսումնասիրել գունանունների ծագումը արաբերենում ու հայերենում և բնութագրել, թե ինչ են

խորհրդանշում գունանունները, կատարել դարձվածային միավորների զուգադրական վերլուծություն:

Ուսումնասիրության առարկան երկու լեզուների գունանուններն ու դրանցով կազմված դարձվածային միավորներն են:

Գույնը ոչ միայն օբյեկտիվ աշխարհի գրեթե բոլոր առարկաների համար բնորոշ հատկանիշ է, այլև գեղագիտական և զգացմունքային տպավորությունների աղբյուր (Рубенштейн, 2002, с. 201): Առանձին գունանուններին նվիրված են բազմաթիվ հետազոտություններ, որոնց մեջ կարևոր տեղ են զբաղեցնում Ա.Վեժբիցկայայի՝ տարբեր լեզուների գունային եզրույթներին նվիրված աշխատությունները: Նա մասնավորապես առաջ է քաշում այն գաղափարը, որ գունային ընկալումները միշտ չէ, որ արտահայտվում են լեզվական միջոցներով, սակայն դրանց մասին կարելի է խոսել, քանի որ մարդը գիտի, թե ինչպես կապել տեսողական ընկալումը որոշակի համընդհանուր և մատչելի նմուշների (մոդելների) հետ: Նման մոդելների շարքում կարելի է ներառել այնպիսի բառեր, ինչպիսիք են *կրակ*, *արև*, *բուսական աշխարհ*, *երկինք*, ինչպես նաև *օր* ու *գիշեր* բառերը: Արդյունքում մարդը տարբերակում է «լուսավոր» և «պայծառ», ինչպես նաև «մուգ» և «խամրած» տեսք կամ գույն ունեցող առարկաները: Առաջինն առաջարկում է արևի լույսի ներքո, իսկ երկրորդը՝ մթության մեջ «տեսնելու» գաղափարները (Вежбицкая, 1999, с. 231-283):

Գույնը, հանդիսանալով մշակույթի անփոփոխակ, կարող է ծառայել որպես «զարգացման յուրօրինակ մոդել, որը մշակութային հիշողության մեջ արտացոլում է ոչ միայն ընդհանուր, այլև ազգային երանգավորում ունեցող մշակութային նշանակալի հասկացությունների ձևավորման, զարգացման և համախմբման ուղիները» (Алефиренко, 1999, с. 109):

Չընդլայնելով գույնի և նշանակության խնդիրը, որի մասին շատ է գրվել վերջին տարիներին, միայն կարելի է մատնանշել, որ նույն գունանվան խորհրդանիշը կարող է էապես տարբերվել ոչ միայն տարբեր ժողովուրդների, այլև մեկ ազգային մշակույթի շրջանակներում: Միշտ էլ գիտնականներին հուզել են գոյաբանական տարբեր պայմաններում մարդու հոգեկան աշխարհի վրա գույնի թողած ազդեցության խնդիրները: Օրինակ՝ դեմքի գույնի փոփոխությունը որոշակի հակազդումն է տարբեր տեսակի գրգռիչներին, ապրումներին և այլն: Դեմքը կարմրում է ուժեղ հուզմունքից, ամոթից, վրդովմունքից, ուրախությունից, ցավից, ջերմությունից և շատ ուրիշ գործոններից: Հետևաբար, կարմիր գույնը որոշակի համատեքստում կամ կայուն արտահայտություններում նույնպես կարող է կրել որոշակի իրավիճակի դրոշմը: Համեմատենք, օրինակ՝ արաբ. *kana wajhuhu ahmar mitla kita min*

adam almutajalita / Նրա դեմքը կարմրել էր արյան լյարդացած կաթիլի պես (Թաիր Զաքի, «Մարդը, ով կարմրել էր»), հայ.՝ «Ես ներս եմ վազում և գրկում եմ քույրիկիս ..., ջերմությունից նրա գրավիչ կաթնաթույր դեմքը կարմրել, ասես այրվում է... («Մի հայի պատմություն» Մ. Հարություն):

Հիմնական գունանունները, որոնք մենք օգտագործում ենք բնության մեջ եղած մաքուր երանգները նշանակելու համար, ինչպիսիք են սևը, սպիտակը, կարմիրը, դեղինը, կանաչը, կապույտը, առաջացել են հին ժամանակներում և զարգացել որոշակի օրինաչափությամբ: Նախ՝ գործածության մեջ են մտել *սևն* ու *սպիտակը* կամ *մուգն* ու *բացը*, ապա՝ առաջ են եկել *կարմիրը*, *կանաչը*, *դեղինը*, *կապույտն* ու *գորշը*: Վեջին փուլում հաջորդել են բարդ գույները՝ *վարդագույնը*, *նարնջագույնը* և այլն: Այս հաջորդականությունը կապված է լեզվի պատմական զարգացման հետ (Berlin, Kay, 1969).

Գունանունների ծագումը հայերենում և արաբերենում

Հայերենի և արաբերենի գունանուններով դարձվածքների զուգադրական ուսումնասիրությունից առաջ հարկ ենք համարում անդրադառնալ գունանունների ծագմանը:

Որպես լեզվի հիմնական բառապաշարի մաս, որը զարգացել է մինչև մշակույթների փոխադարձ ներթափանցումը, գունանունները արաբերենում այլ լեզուներից չեն փոխառվել: Դրանք ամբողջությամբ արաբական արմատով միավորներ են՝ «aswad» (սև), «abyad» (սպիտակ), «ahmar» (կարմիր), «asfar» (դեղին), «axdar» (կանաչ), «azraq» (կապույտ):

Ինչ վերաբերում է հայերենի գունանունների ստուգաբանությանը, դրանցից շատ քչերն ունեն բնիկ հայկական ծագում և հիմնականում փոխառված են իրանական բառահիմքերից: Դրանք են *կարմիր*, *կապույտ*, *սպիտակ* և *սև* գունանունները: Կանաչ գույնի ծագումն անհայտ է: Հիմնական գունանուններից միայն դեղին գույնն ունի բնիկ հայկական ծագում: Այն էլ ոչ թե ուղղակիորեն սերում է հնդեվրոպական որևէ առաջնային գունարմատից, այլ ածանցվել է հայերեն դեղ «(դալար) խոտ, դարման, ճար» բառից (Աճառյան, 1971, էջ 651): «Թեև հայերենի գունանունների համակարգի ձևավորման մեջ մեծ դեր են խաղացել հարևան լեզուներից փոխառված գունանունները, սակայն համեմատական վերլուծությունը թույլ է տալիս բացահայտելու հայերենի գունանունների գունային նշանակումների զգալի մասի պատմական ուղին ու իմաստային անցումները» (Сараджева, 1976, с. 186-199):

Ինչպես գրում է Ս.Ա. Գրիգորյանը, հայ ժողովրդի կողմից գունանունների վառ պատկերումը սկսվել է դեռևս «Վահագնի ծնունդից», հասել Նարեկացու ստեղծագործություններին և իրենց վառ

արտահայտությունը գտել ողջ հայ գրականության մեջ (Գրիգորյան, 1993, էջ 200):

Արաբական իրականության մեջ գույնն առաջին անգամ հիշատակվում է իրենց սուրբ գրքի՝ «Ղուրանի» նկարագրություններում և իր շարունակությունը գտնում իսլամական մշակույթում (Հանան ալ Ֆիթահ, 2017, էջ 418):

Հայերենի և արաբերենի՝ գունանուններով դարձվածքների զուգադրական ուսումնասիրությունը:

Սույն հոդվածում զուգադրական ուսումնասիրության հիմք են դարձել *սպիտակ, սև, կարմիր, կապույտ, կանաչ և դեղին* գունանունները և դրանցով կազմված դարձվածքները:

Սպիտակ գույնը տարբեր մշակույթներում ունի ոչ միայն «պարզ», «թեթև» ընդհանուր ընդունված նշանակությունը, այլև ավանդաբար ընկալվում է որպես հույսի, բարության, մաքրության, անմեղության և այլ հասկացությունների խորհրդանիշ: Գույների իմաստային ակունքը պետք է փնտրել մարդու կենսահոգեբանական փորձի մեջ: Սպիտակ գույնը կապվում է մարդու օրգանիզմի կարևորագույն հեղուկների՝ սերմի և կաթի հետ: Այստեղից էլ սկիզբ է առնում այդ գույնի՝ որպես կեցության, կյանքի, ուժի, առողջության և մաքրության խորհրդանիշ լինելը (Тернер, 1983):

Ինչպես արդեն նշվել է, արաբերենում գույների առաջին հիշատակումները հանդիպում են «Ղուրանում», որտեղ սպիտակը նույնացվում է արևի լույսի հետ և գործածվում է առնվազն տասն անգամ:

Արաբերենում սպիտակը խորհրդանշում է ուրախություն՝ *abayda wajhaha* «նրա դեմքը սպիտակեց», բարություն՝ *qalb abyad* (*սպիտակ սիրտ*), *xabar abyad* (*բարի լուր*), *ողորմություն՝ al yad albayda*՝ (բառացի «սպիտակ ձեռք»), անարյուն հեղափոխություն՝ *taura bayda*՝ (*սպիտակ հեղափոխություն*), երջանկություն՝ *yaum abyad* (*երջանիկ օր*): Սպիտակ գունանունը հաճախ հանդիպում է նաև համեմատական կառույցներում՝ *Abyad mitla lub allaft* (*սպիտակ, ինչպես շաղգամի միջուկը*) կամ *abyad mitla almilh almathūn* (*սպիտակ, ինչպես մանրացված աղ*):

Արաբական մշակույթում սպիտակը խորհրդանշում է նաև ազնվություն, վստահություն, անվտանգություն և առատաձեռնություն: Մինչդեռ պետական խորհրդանիշների մակարդակով այն նշանակում է արաբական միասնություն ու հաղթանակ: Պատահական չէ, որ սպիտակը եղել է Օմայան դինաստիայի (մ.թ. 661-750) խորհրդանշական գույնը, որի օրոք տարածքային հիմնական ձեռքբերումներն իրականացվել են Հյուսիսային Աֆրիկայում, Եվրոպայում և Արաբական թերակղզուց արևելք՝ մինչև Հնդկական օվկիանոս (Кухарева, 2019, с. 100):

Հարկ է նշել, սակայն, որ արաբական լեզվամշակույթում սպիտակ գույնը միշտ դրական երևույթների խորհրդանիշ է: Այն խորհրդանշում է նաև ծերություն, մահ և հիմարություն: Օրինակ՝ տզետ, հիմար մարդուն նկարագրում են հետևյալ կերպ՝ *lahu mux abyad* / «Սպիտակ ուղեղ ունի», կամ կասկածանք արտահայտելու համար գործածում են հետևյալ արտահայտությունը՝ *ma kul albayḏā' šahma* / «ամեն սպիտակ բան ճարպ չի», որովհետև բեղվին արաբների համար ճարպը ամենաարժեքավոր սննդամթերքն է, էներգիայի աղբյուրը, որն անհրաժեշտ է անապատում գոյությունը պահպանելու համար: Եգիպտացի արաբները կյանքում ոչինչ չվաստակա՞ծ մարդուն բնութագրում են հետևյալ կերպ՝ *la yamliku aswad wa la abyad* (ոչ սպիտակ ունի, ոչ սև):

Հայ լեզվամշակույթում սպիտակը դեռևս անհիշելի ժամանակներից եղել է խորհրդանշական գույն: Ինչպես նկատել է Վ. Առաքելյանը «Դիցապաշտ հայի խորհրդանշական գույնը սպիտակն է: Այս գույնի պատկերացումը ճիշտ կլինի կապել լույսի հետ...: Հայի համար մինչ այսօր էլ բնորոշ է սպիտակ գույնով ողջակեզ մատուցելը» (Առաքելյան, 1975): Սակայն հետաքրքրական է, որ տվյալ գունանունը պարունակող դարձվածային միավորները շատ չեն: Առավել ցայտուն ազգային կոլորիտ են հաղորդում հայերենի հետևյալ դարձվածքները՝ *սպիտակ քաթան, փաթուսիսա, սպիտակ դուշ, սպիտակին սև ասել՝ ժխտել ճշմարտությունը: Սպիտակ՝ ոնց որ մեռելի զղաչի* համեմատական կառույցը արտահայտում է մարդու գունատության և հիվանդության բարձր աստիճանը:

Արաբերենում սև գույնը զուգորդվում է չար ուժերի և «մութ, մռայլ» հասկացությունների, ինչպես նաև բացասական հույզերի հետ, օրինակ՝ *almustaqbal alaswad* (*սև սպազա*), *xabar aswad* (*սև լուր*), *alfaqr alaswad* (*սև աղքատություն*), *alḥaqd alaswad* (*սև նախանձ*), *aswadat adunya fi 'aynihil* (*աչքերի առաջ սևանալ, մթնել*) և այլն:

Սակայն սև գունանունը մուսուլմանական արևելքում ունի այլ խորհուրդներ ևս: Մուսուլմանների ամենամեծ սրբավայրը «Սև քարը» պահվում է Քաաբայի տաճարում՝ Մեքքայի գլխավոր մզկիթում: Իսկ տաճարն էլ ծածկված է սև կտորով (*qiswa*):

Մի շարք արաբական երկրների դրոշների վրա առկա է սև գույնը, ինչը խորհրդանշում է թշնամիների պարտություն և անխուսափելիի հանդեպ վախ: Պատահական չէ, որ միջնադարյան արաբական խալիֆայության ամենահզոր դինաստիայի՝ Աբբասյան (մ.թ. 750-1258 թթ.) խալիֆաների հագուստն ու դրոշները սև էին (<https://shorturl.at/jktX7>):

Արաբերենին բնորոշ է երկակի թվի գործածումը և այն իր վառ արտահայտությունն է գտնում նաև դարձվածքներում; Այսպես, օրինակ՝ *երկու սև ասելով արաբներն ի նկատի ունեն օձ և կարիճ կամ խուրմա և*

ջուր (Բարանով, 1976, էջ 381): Այս երկու դարձվածային միավորների բաղադրիչները շատ բնորոշ են արաբական լեզվամշակույթին: Սև գույնը մահաբեր վտանգ է, որ պատճառում են այս կենդանիները: *Խուրման և խոր* ջրհորում ջուրը նույնպես սև գույն ունեն և եղել են արաբ բեդուինների առօրյա կյանքի կարևորագույն երևույթները (<https://shorturl.at/frtCS>):

Հայերենում սև գույնը զուգորդվում է այնպիսի առարկաների հետ, ինչպիսիք են սուրման, զեյթունը, սատանի եղունգը, մայիսյան բզեզը, սև աքաղաղը և այլն:

Սևը խորհրդանշում է նաև մահ՝ որպես հավիտենական խաղաղություն և դառնում քրիստոնյա վանականների հանդերձանքի հիմնական գույնը (Тернер, 1983), ինչը մենք տեսնում ենք նաև հայերի օրինակով:

Դարձվածաբանական բառարանները առաջարկում են սև գունանվամբ հետևյալ արտահայտությունները՝ *սև աղվես դառնալ* (հազվագյուտ երևույթ), *սև ամպ իջնել* (վտանգի ենթարկվել), *սև անել գլխին* (դարդոտվել), *սևը տալ*, *սև բերել* (պատժել), *սև բիծ* (թերություն), *սև թուղթ* (մահ ազդարարող թուղթ), *սև գույներով ներկել* (վատաբանել), *սևերես լինել* (ամոթով մնալ), *սև օր* (վատ օր), *սև սատանա* (անամոթ), *սև հողին հանձնել* (թաղել), *սև շուն* (վատ մարդ) և այլն: Սև ուրբաթի պես համեմատությունը նշանակում է անտրամադիր լինել, սակայն այս արտահայտությունն այսօր այլ իմաստ ունի շատ լեզվամշակույթներում:

Կանաչ գույնը հատուկ նշանակություն ունի արաբների համար: Այն իսլամի, կյանքի և ուրախության, հույսի, Աստծո օրհնության խորհրդանիշն է: Այն միակ գույնն է, որն արաբերենում բացասական նրբերանգ չունի: Դա է մատնանշում նաև երկնքի անվանվումը՝ *alxadrā*: Անպատում ապրող արաբների համար չոր, արևադարձային կլիմայական գոտում կանաչ օազիսը հանգստի, թարմության և զովության վայր է, իսկ գարնանային ծաղկման շրջանն ընկալել են որպես Աստծո ողորմություն ու շնորհ: Հետևաբար, կանաչ գույնը միայն դրական հույզեր է առաջացնում: «Ղուրանում» կանաչի բոլոր երանգները դրախտի տարբերակիչ հատկանիշներն են (Kyxaraba, 2019, c. 105):

Հ. Կ. Բարանովի բառարանում *axdar*՝ (կանաչ) ածականով հանդիպում են այնպիսի դարձվածքային միավորներ, ինչպիսիք են՝ *iktasaha laxdar wa lyābis* (ավլել ամեն ինչ (փոթորիկի մասին)), *yati 'alal axdar wa lyābis* (ոչնչացնել ամեն ինչ (կրակի մասին)): Կանաչ գունանունն արտահայտում է նաև քաղցրություն՝ *alma*՝ *al'adb alaxdar al* (թարմ քաղցրահամ ջուր), խորհրդանշում է անփորձություն՝ *axdar al'ūd* (կանաչ ընձյուղ՝ անփորձ): Արաբերենում լայն տարածում ունի նաև *yad xadrā*՝ (կանաչ ձեռք) դարձվածքը, որը հայերեն կարելի է թարգմանել *թեթև ձեռք*

արտահայտությամբ: Իսկ *aṣābi‘ xadrā’* (կանաչ մատներ) արտահայտությանը հայերենում համապատասխանում է *նուկի ձեռքեր* դարձվածքը:

Հայերենում կանաչ գույնը խորհրդանշում է կենսուրախություն, երիտասարդություն, կյանքի սկիզբ: Դրա մասին են վկայում կանաչ գունանունով դարձվածքները և գեղարվեստական գրականության մեջ հանդիպող համեմատական կառույցները: Համեմատենք հետևյալ օրինակները՝ *կանաչ արև* (երիտասարդ կյանք), *կանաչ ճանապարհ* (անփորձանք), *կանաչ-կարմիրը կապել* (ամուսնացնել), *կանաչ տերևից ընկած* (վաղամեռիկ) և այլն: Թեև հազվադեպ, բայց հայերենում կան նաև բացասական իմաստ ունեցող դարձվածքներ, օրինակ՝ *դեմքը չարությունից կանաչել էր*:

Արաբերենում կարմիրը խորհրդանշում է վտանգ, դժվարություն, անտեսում, մոլորություն, գրգռվածություն; Այդ մասին են վկայում մի շարք արտահայտություններ՝ *wa la aljīn alahmar yaqdir ‘aleyhi* (կարմիր ջինը նրա վրա չի կարող), այսինքն՝ *սափանան գլուխ չի հանի, բանը բուրդ է*: Եվ քանի որ այն արյան գույնն է, ապա նաև քաջության և պատերազմի խորհրդանշան է: Հետաքրքրական է, որ ժամանակակից կոսմետիկ միջոցների անվանումները նույնպես կազմվում են կարմիր գունանվամբ *ahmar al xudūd* (կարմրաներկ), *ahmar al ṣifā’* (շրթներկ): Մինևույն ժամանակ կարմիրը սիրո և երիտասարդության խորհրդանշան է: *alhamra ka šaqā’iq anni’mān* (հողմածաղկի պես կարմրել) համեմատական կառույցն ունի ամոթից կարմրել իմաստը:

Հայերենի դարձվածաբանական բառարաններում ընդգրկված են կարմիր գունանվամբ հետևյալ միավորները՝ *կարմիր արև* (կյանք), *կարմիր արևից ընկած* (վաղամեռիկ), *կարմիր դրոշ* (հեղափոխություն), *կարմիրը կապել* (ամուսնություն), *կարմիր խնձոր* (ողջախոհություն), *կարմիր օր* (լավ օր), *մինչև ականջները կարմրել* - ամաչել և այլն: *Կարմիր կովն իր կաշին չի փոխի* ասացվածքը արտահայտում է անփոփոխ մնալու իմաստ: «Նռան պես կարմիր» համեմատությունը բնորոշ է հայերենի առօրյա խոսակցական ոճին, իսկ նույնը համարվում է պտղաբերության, կյանքի խորհրդանշանը և հայ ճարտարապետության կարևոր մաս է: Հայերենին հատուկ է հետևյալ արտահայտությունը՝ *կարմիր, վարդագույն, ինչպես տուֆը*, որտեղ համեմատության չափանիշը տուֆն է: Երևանը կառուցված է տուֆից, ինչի համար էլ երբեմն անվանում են նաև «վարդագույն քաղաք»: Հայերենում ասում են՝ շեկ, կարմիր, ինչպես ժայռը: Ուժեղ, կիզիչ արևի պատճառով Հայաստանում ժայռերը կարմրավուն գույն ունեն:

Հարկ է նշել, որ կարմիրը առկա է շատ ժողովուրդների ազգային տարազներում: Թե՛ արաբ, և թե՛ հայ ժողովուրդները դրա վառ օրինակներն են:

Արաբական լեզվամշակույթում կապույտ գունանունը ընդգծում է երևույթների բացառիկ բնույթը: Մասնի բառարանում *al'adu alazraq* (*երդվյալ թշնամի*) դարձվածային միավորը (բառացի՝ կապույտ թշնամի) բացատրվում է հետևյալ կերպ՝ բյուզանդացիները, որոնց հետ արաբները թշնամություն էին անում, կապույտ աչքեր ունեին, ինչը պատճառ է դարձել, որ կատաղի թշնամիներին կոչեն «կապույտ»:

Կան նաև դարձվածային միավորներ *alxauf alazraq* (կապույտ խուճապ), *al'araq alazraq* (կապույտ (սառը) քրտինք (վախից)): Սակայն ժամանակակից լեզվում նման արտահայտությունները սակավ գործածելի են: Հետևյալ արտահայտությունը նույնպես հատուկ է արաբական լեզվամշակույթին՝ *'ayn zarqā' alyamama* (*Յամամայի կապույտ աչքեր* – սրատես): Դարձվածքի հիմում նախախլամական դարաշրջանում ապրող Յամամա ցեղի կապույտաչյա մի աղջնակի մասին ավանդությունն է, որն օժտված էր անսովոր սուր տեսողությամբ:

Հետաքրքրական է, որ հայերենում կապույտ գունանվամբ դարձվածային միավորները հիմնականում գրքային են կամ համարվում են պատճենումներ՝ *կապույտ հագ*, *կապույտ արյուն* (ազնվական ծագում ունեցող), *կապույտ գիշերներ* (շվայտություն): Ազգային կարելի է համարել *Սևանի պես կապույտ* համեմատությունը, որը ջրի առանձնահատուկ թափանցիկության, մաքրության և խորության շնորհիվ միշտ կապույտ է թվում: Հայերենում գործածվում է նաև *կտավարի ծաղկի պես կապույտ* արտահայտությունը:

Ինչ վերաբերում է դեղին գույնին, արաբական լեզվամշակույթում այն խորհրդանշում է հարգանք, շքեղություն, հարստություն, ուրախություն և զվարճանք: Հնում արաբները «ոսկի» բառի փոխարեն գործածել են «դեղին» գունանունը, իսկ *asfarān* (*երկու դեղին*) դարձվածքը նշանակում է ոսկին և քրքումը: Վերջինս Արևելքում մեծ տարածում ունեցող համեմունք է:

Դեղինը ունի նաև բացասական երանգավորում՝ հիվանդություն, նախանձ: Դարձվածաբանական բառարաններում ներառված են հետևյալ միավորները՝ *ibtisāma šafra'a* (թթված, կեղծ ժպիտ), *dahika šafra'a* (դառը ծիծաղ), *asfara wajhahu* (դեմքը դեղնել՝ գունատվել) և այլն: *Al'ayn šafra'a* (*դեղին աչք*) դարձվածքը արտահայտում է նախանձ և չարություն (<https://www.almaany.com/>):

Դեղին գունանվամբ է կազմված հայերենի հետևյալ համեմատությունը՝ «խունկի պես դեղին»: Այն չի կարելի տիպիկ

հայկական համարել, բայց շատ է օգտագործվում առօրյա խոսքում: Այս անուշաբույր նյութն օգտագործվում է ոչ միայն եկեղեցական արարողությունների ժամանակ, այլև ծխում են տանը, քանի որ այն հականեխիչ հատկություն ունի: Հայկական հին սովորությունների համաձայն՝ հարազատների շիրիմների վրա խունկ են ծխում նաև նրանց հոգիների հանգստության համար:

Եզրակացություն

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ յուրաքանչյուր ժողովրդի լեզվում գույների խորհրդանշական իմաստները կապված են նրա աշխարհի լեզվական պատկերի հետ, որում արտացոլվում են պատմական զարգացման ընթացքում ձեռք բերված և սերնդեսերունդ փոխանցվող մշակութային, հոգևոր, բարոյական արժեքներն ու տնտեսական, աշխարհագրական պայմանների առանձնահատկությունները: Եվ հենց վերջիններով է պայմանավորվում ազգային ինքնության պահպանումը:

Ինչ վերաբերում է դարձվածային միավորներում գունանունների գործածմանը, պետք է նշել, որ երկու լեզուներում ամենահաճախ հանդիպում են *սև* և *սպիտակ* գունանուններով դարձվածքները, որը կարելի է բացատրել այն հանգամանքով, որ տարբեր ժողովուրդներ մոտ այդ գույները հիմնականում նույն կերպ են ընկալում և զուգորդում, ինչը, իր հերթին, համապատասխանում է «խավար» և «լուս» հասկացությունների ընկալմանը և մեկնաբանմանը (Вежбицкая 1996: 231-283):

Հայերենում գունանունները հիմնականում ունեն նախալեզվային ծագում կամ փոխառված են հին պարսկերենից, իսկ արաբերենում դրանք բուն արաբական ծագման են:

Բոլոր գույները (սպիտակ, սև, կարմիր, կապույտ, դեղին), խորհրդանշում են թե՛ դրական, և թե՛ բացասական երևույթներ: Բացառություն է կազմում արաբերենի կանաչ գունանունը, որն ունի միայն դրական իմաստ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ
REFERENCES

1. Աճառյան Հ. Հ., Հայերենի արմատական բառարան, հատոր Ա, Երևան, 1971, 705 էջ:
Atwar'yan H. H., Hayereni armatakan bar'aran, hator A, Erevan, 1971, 705 e'j: (in Armenian)
2. Առաքելյան Վ. Դ., Նարեկացու լեզուն և ոճը, Երևան, 1975, էջ 201:
Ar'aqelyan V. D., Narekacow lezown & otwy', Erevan, 1975, e'j 201: (in Armenian)
3. Աս Սամուրի, Մուհամմեդ, դալալաթ ալ-լաուն ալ-աբյադ (Սպիտակ գունանվան խորհրդանիշը) /հասանելիությունը՝ <https://shorturl.at/frtCS> (07.09.2023).
As Samowri, Mowhammed, dalalat' al-laown al-abyad (Spitak gowanvan xorhrdanishy') /hasaneliowt'yowny" (in Armenian)
<https://shorturl.at/frtCS> (07.09.2023).
4. Գրիգորյան Ս. Ա., Հայերենի գունանունների ոճական արժեքը. ԲԵՀ 1 (79), Երևան 1993 թ., էջ 200-205
Grigoryan S. A., Hayereni gowanownneri otwakan arjhegy'. BEH 1 (79), Erevan 1993 t', e'j 200-205 (in Armenian)
5. Մուսաիդա Մարիամ, Սիֆաթ ալ ալվան ֆի լ-լուղա ալ-արաբիյա (Գույների բնութագրություններն արաբերենում) / հասանելիությունը՝ <https://shorturl.at/jktX7> (07.09.2023)
Mowsaida Mariam, Sifat' al alvan fi l-lowgha al-arabiya (Gowyneri bnowt'agrowt'yownnern araberenowm) / hasaneliowt'yowny" (in Armenian) <https://shorturl.at/jktX7> (07.09.2023)
6. Алефиренко Н. Ф., Полевое структурирование лексико-фразеологического космоса / Н. Ф. Алефиренко // Теория поля в современном языкознании. - Уфа, 1999. - Ч. 5. - С. 17-19.
Alefirenko N. F., Polevoe strukturirovanie leksiko-frazeologicheskogo kosmosa / N. F. Alefirenko // Teorija polja v sovremennom jazykoznanii. – Ufa, 1999. - Ch. 5. - S. 17-19. (in Russian)
7. Баранов Х. К., Арабско-русский словарь: Ок. 42000 слов. - 5-е изд., перераб. и доп. / Х.К.Баранов. - М : Изд. Русский язык, 1976. - 944с.
Baranov H. K., Arabsko-russkij slovar': Ok. 42000 slov. - 5-e izd., pererab. i dop. / H.K.Baranov. - M : Izd. Russkij jazyk, 1976. - 944s. (in Russian)
8. Вежбицкая А., Семантические универсалии и описание языков / А. Вежбицкая. - М. : Языки русской культуры, 1999. - 778 с.

- Vezhbickaja A., Semanticheskie universalii i opisanie jazykov / A. Vezhbickaja. - M. : Jazyki russoj kul'tury, 1999. - 778 s. (in Russian)
9. Вежбицкая А., Язык. Культура. Познание : пер. с англ./А. Вежбицкая. - М. : Языки русской культуры, 1996.- 411 с.
Vezhbickaja A. Jazyk. Kul'tura. Poznanie : per. s angl./A.Vezhbickaja.- M. : Jazyki russoj kul'tury, 1996.- 411 s. (in Russian)
 10. Корнилов О. А., Языковые картины мира как производные национальных менталитетов/О.А.Корнилов.-2-е изд., испр. и доп. - М.: ЧеРо, 2003. - 349 с.
Kornilov O. A., Jazykovye kartiny mira kak proizvodnye nacional'nyh mentalitetov/O.A.Kornilov.- 2-e izd.,ispr.i dop.- M.: CheRo, 2003.- 349 s. (in Russian)
 11. Кухарева Е. В., Символика цвета в этнической картине мира арабов / Филологические науки в МГИМО. 2019;17(1), 97-107.
Kuhareva E. V., Simvolika cveta v jetniceskoj kartine mira arabov / Filologicheskie nauki v MGIMO. 2019;17(1), 97-107. (in Russian)
 12. Рубинштейн С. Л., Основы общей психологии / С. Л. Рубинштейн. - СПб.: Питер, 2002. - 721 с.
Rubinshtejn S. L., Osnovy obshhej psihologii / S. L. Rubinshtejn. - SPb.: Piter, 2002. - 721 s. (in Russian)
 13. Сараджева Л. А., Сравнительно-типологическое исследование цветовых обозначений в древнеармянском и древнеславянском языках, ИФЖ 1976г., № 4, с. 186-199.
Saradzheva L. A., Sravnitel'no-tipologicheskoe issledovanie cvetovyh oboznachenij v drevnearmjanskom i drevneslavjanskom jahyках, IFZh 1976g., № 4, s. 186-199. (in Russian)
 14. Тернер В., Цветовая классификация в ритуалах Ндембу: Проблема невербальной классификации//Тернер В. Символ и ритуал. М: Наука, 1983.
Turner V., Cvetovaja klassifikacija v ritualah Ndembu: Problema neverbal'noj klassifikacii//Turner V. Simvol i ritual. M: Nauka, 1983. (in Russian)
 15. Berlin, B., & Kay, P., Basic Color Terms: Their Universality and Evolution. Berkeley & Los Angeles: University of California Press. 1969.
 16. حنان عبد الفتاح محمد مطاوع، الألوان ودلالاتها في الحضارة الإسلامية، مجلة الاتحاد العام للآثاريين العرب 18، 2017، ص. 417-450.
Ḥanān 'abd alfatāḥ muḥammad muṭāwi', alalw ān wa dalalāt filḥaḍāra lislāmiya: majalat ilit ḥ ād al'am lila t āriyin al'arab 18, 2017, p.417-450.
 17. المعنى: <https://www.almaany.com/ar/dict/ar-ar>
AL Ma'āny, <https://www.almaany.com/ar/dict/ar-ar>

КРИСТИНЕ РАФАЕЛОВА - КОЛОРНИМЫ И ИХ СИМВОЛИЧЕСКОЕ ЗНАЧЕНИЕ В АРМЯНСКОЙ И АРАБСКОЙ ЛИНГВОКУЛЬТУРАХ

Ключевые слова: культура, язык, название цвета, словосочетание, происхождение, значение, символ.

Влияние цвета играет важную роль в определении национальных особенностей языковой картины мира. Символизм одного и того же колоронима может существенно отличаться не только у разных народов, но и в рамках одной национальной культуры.

В статье подчеркивается происхождение чистых тонов, встречающихся в природе, частотность употребления, а также проводится сравнительное исследование арабских и армянских фразеологизмов, в состав которых входят колоронимы.

KRISTINE RAFAYELOVA - COLOUR NAMES AND THEIR SYMBOLIC MEANING IN ARMENIAN AND ARABIC LINGUOCULTURES

Keywords: culture, language, color name, phrase, origin, meaning, symbol.

Color names play an important role in defining the national characteristics of the linguistic world picture. The symbolic meaning of the same color name can be significantly different not only among different peoples, but also within the same culture. The present paper emphasizes the origin of pure shades found in the nature, the frequency of their use, and also provides a comparative study of phraseological units with color names in Arabic and Armenian.

Ներկայացվել է՝ 25.10.2023 թ.
Գրախոսվել է՝ 10.11.2023 թ.